Հրապարակման ենթակա չէ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ֆինանսների նախարարության միջազգային համագործակցության վարչության պետ Արգամ Արամյանի՝ 2023թ. մայիսի 31-ից հունիսի 4-ը Սալոնիկ գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

Արգամ Արամյան, ՀՀ ֆինանսների նախարարության միջազգային համագործակցության վարչության պետ

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Ք. Սալոնիկ, Հունաստանի Հանրապետություն, 2023 թվականի մայիսի 31-ից հունիսի 4-ը

3. Հրավիրող կողմը՝

Սևծովյան առևտրի և զարգացման բանկ (ՍԱԶԲ)

4. Գործուղման նպատակը՝

Մասնակցություն՝ ՍԱԶԲ Աուդիտորների կոմիտեի 106-րդ և Տնօրենների խորհրդի արտահերթ՝ 155-րդ նիստերին:

5. Քննարկված թեմաները՝

Աուդիտորների կոմիտե

Աուդիտորների նիստում քննարկվեցին 2022թ. տարեկան ֆինանսական փաստաթղթերը, Համապատասխանության (Compliance) վարչության գործունեությունը, տեղեկտվական տեխնոլոգիաների վարչության կողմից կատարված աշխատանքներ, մարդկային ռեսուրսների կառավարման ոլորտում առկա հարցեր, Բանկի տեղակայման վայրին առնչվող զարգացումներ:

Տնօրենների խորհուրդ

Կապիտալի բաժանորդագրում և քվեարկության ձայների կշիռ, տարածաշրջանային տնտեսական զարգացումներ, 2023թ. ապրիլի դրությամբ իրականացված գործառնություններ, նոր ծրագրերի հաստատում, 2022թ. ֆինանսական փաստաթղթերի հաստատում, 2022թ. տարեկան զեկույց, Աուդիտորների կոմիտեում քննարկված հարցերի ներկայացում, կառավարիչների և օրապահիկի և փոխհատուցման վերանայում, Կառավարիչների խորհրդի և Տնօրենների խորհրդի հաջորդ նիստերի օրվա և վայրի որոշում:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Աուդիտորների կոմիտե

Աուդիտորների կոմիտեի ուշադրությանը ներկայացվեց բանկի ներկա ֆինանսական վիճակը, ֆինանասական կայունությանն ուղղությամբ իրականացված միջոցառումները, ֆինանսական փաստաթղթերի վերաբերյալ անկախ աուդիտորների գնահատականները: Նշվեց, որ չնայած ռուս-ուկրաինական պատերազմի պատճառով երկու անդամ երկրներում ի հայտ եկած դժվարություններին, Բանկին այդուհանդերձ հաջողվել է պահպանել կայունությունը և ընթանալ զարգացման ուղիով:

Համապատասխանության (Compliance) վարչության կողմից նշվեց, որ բազում տեսանկյուններից դիտարկվել են Բանկի առկա իրավիճաներում համարժեք քաղաքականությունների և արձագանքների հարցերը: Ակտիվ գործունեություն է ծավալել նաև ներքին աուդիտի վարչությունը՝ հնարավոր խնդիրներն արձանագրելու և դրանց ուղղությամբ համարժեք քայլեր ձեռնարկելու ուղղությամբ:

Տեղեկատվական տեխնոլոգիաների վարչությունը ներկայացրեց այն ծրագրերի ցանկն ու ներդրման ընթացքը, որոնք Բանկը նախաձեռնել է Բանկի ներսում մի շարք ուղղություններով գործընթացներն ու գործառույթներն առավել արդյունավետ դարձնելու ուղղությամբ, սակայն նաև նշվեց, որ դրանք ոչ միշտ են սահուն ընթանում

և ցանկալի ժամկետներում: Որոշ ծրագրերի ներդնում շատ ավելի երկար է տևում, քան դրանք ի սկզբանե նախատեսված են եղել:

Մարդկային ռեսուրսների կառավարման ոլորտում հարցերը, ինչպես մյուս նմանատիպ ինստիտուտներում մշտապես ուշադրության կենտրոնում են և այդ ոլորտում անելիքները շատ են: Ներկայում Բանկին անհրաժեշտ է հետագա ռազմավարության հստակեցում և հետագա ռազմավարական ուղենիշների հաստատում: Որոշ տեղերում առանցքային պաշտոնների համալրման կարիք կա, ինչը դեռևս դանդաղ է ընթանում, սակայան դրանց արագ լուծումն անհրաժեշտություն է:

Բանկի գրասենյակի տեղակայման նոր վայրի մասով, նշվեց, որ ապրիլին կայացած նախորդ նիստից հետո նշանակալի զարգացումներ տեղի չեն ունեցել: Բանակցությունները շարունակվում են երկու ուղղությամբ՝ մեկը նավահանգստի մոտ տեղակայման մասով է, մյուսը Սալոնիկ քաղաքի կենտրոնին մոտ հատվածում, սակայն վերջնական որոշում դեռ չկա, հույսեր կան, որ սեպտեմբերին հստակեցում կլինի: Այստեղ կարևոր է, որ հունական կառավարությունը պատրաստ է 10 մլն. ԱՄՆ դոլար դրամաշնորհ տրամադրել այդ հարցի լուծման համար, իսկ Բանկից կպահանջվի հավելյալ 5 մլն. ԱՄՆ դոլար հատկացնել: Հարցը տարիներ ի վեր քննարկվել է, սակայն ի վերջո Բանկի հիմնական տեղակայման հարցը պետք է լուծում ստանա, նաև հաշվի առնելով, որ այժմ վարձավճարի համար մեծ գումարներ են ծախսվում, և դա գնալով ավելի ու ավելի ոչ շահավետ է դառնում, ի հաեմատ տեղակայման վայրի հիմնական լուծման:

Քննարկման ավարտին նշվեց, որ կան խնդիրներ, որոնց նիստի ընթացքում անդրադարձ կատարվեց, և որոնք բավական երկար ժամանակ քննարկման առարկա են հանդիսանում: Ակնհայտ է, որ կան հարցեր, որոնք ավելի հրատապ լուծում են պահանջում, և այդ նպատակով կոնկրետ լուծումներ և որոշումներ են պետք՝ Բանկի գործունեության արդյունավետության ապահովման համար:

Տնօրենների խորհուրդ

Կապիտալի բաժանորդագրում և քվեարկության ձայների կշիռների որոշման մասով նշվեց, որ այդ մասին հիմնական որոշումները պետք է կայացվեն ս.թ. հուլիսին

կայանալիք Կառավարիչների խորհրդի կողմից: Նիստի ընթացքում հաստատվեցին Տնօրենների խորհրդի նախորդ երկու 153-րդ և 154-րդ նիստերի արձանագրությունները: Այնուհետև ներկայացվեցին անդամ 11 երկրներում տնտեսական հիմնական զարգացումները, որոնք ներառում էին տնտեսական աճի, գնաճի, միջազգային ֆինանսական կառույցների կանխատեսումների և վարկանիշային կազմակերպությունների կողմից տրվող վարկանիշերին վերաբերող տեղեկատվություն: Ներկայացվեցին նաև 2023թ. ապրիլի դրությամբ իրականացված գործառնությունները՝ ըստ երկրների, ոլորտների, գործառնությունների տեսակների և այլն: Նիստի ընթացքում հաստատվեց Ուկրաինայում մինչև 10 մլն ԱՄՆ դոլար արժեքով իրականացվելիք մեկ ծրագիր:

Նիստի ընթացքում ներկայացվեցին և հաստատվեցին 2022թ. ֆինանսական փաստաթղթերը: 2022թ. տարեկան զեկույցը ներկայացվեց խորհրդի նիստի ուշադրությանը, սակայն չհաստատվեց, քանի որ խորհրդի անդամները այն ստացել էին ընդամենը նիստից մեկ օր առաջ, ուստի որոշվեց, նաև հաշվի առնելով զեկույցի ծավալը, դրա ընդունումը հետաձգել մինչև բոլոր անդամների կողմից ծանոթանալը:

Այնուհետև ներկայացվեցին Աուդիտորների կոմիտեում քննարկված հարցերը, կայացված որոշումները: Կառավարիչների և տնօրենների օրապահիկի և փոխհատուցման վերանայման հարցի հետ կապված քննարկումների արդյունքում նշվեց, որ նման հարցի քննարկման համար պատեհ ժամանակներ չեն, հաշվի առնելով, որ Բանկը մարտահրավերներին դիմակայման փուլում է:

Այլ հարցերի ներքո Բանկի ղեկավարությունն առաջարկեց առկա իրավիճակով պայմանավորված դիտարկել Ռուսաստանում Բանկի ակտիվների վաճառքի հարցում որպես պարտադիր հանգամանք չդիտարկել Տնօրենների խորհրդի հավանության ստացումը՝ նկատի ունենալով, որ երբեմն Բանկի շահերից ելնելով անհրաժեշտ է լինում հրատապ որոշումներ կայացնել: Առաջարկվեց նշյալ առաջարկության մասով դիրքորոշումներ ներկայացնել այն ուսումնասիրելուց և քննարկելուց հետո:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Աուդիտորների կոմիտեի ընթացքում Բանկի համար հրատապ լուծում պահանջող հարցերի վերաբերյալ, հատկապես մարդկային ռեսուրսների կառավարման մասով, համաձայնություն ձեռք բերվեց առավել հրատապները առանձնացնել, դրանց մասով մշակել լուծման հնարավոր առաջարկներ՝ կից ներկայացնելով բոլոր հիմնավորումներն ու անհրաժեշտ վերլուծությունները, որից հետո որոշման կայացման ենթակա հարցերի փաթեթները ներկայացնել Տնօրենների խորհրդի որոշմանը:

Բանկի 2022թ. տարեկան զեկույցի մասով որոշվեց, դրա հասատումը հետաձգել մինչև հունիսի 13-ը, հնարավորություն տալով բոլոր անդամներին ծանոթանալ զեկույցի հետ և անհրաժեշտության դեպքում ներկայացնել առաջարկներ կամ նկատառումներ:

Կառավարիչների և տնօրենների օրապահիկի և փոխհատուցման վերանայման հարցի հետ կապված որոշվեց հարցը հանել օրակարգից և վերջինիս անդրադառալ 2024թ. բյուջեի քննարկումների ժամանակ՝ գնահատելով նաև Բանկի հնարավորությունները տվյալ պահի դրությամբ:

Որոշվեց նաև Տնօրենների խորհրդի 156-րդ և Կառավարիչների խորհրդի 25-րդ նիստերն անցկացնել համապատասխանաբար ս.թ. հուլիսի 5-ին և 6-ին Սալոնիկում:

Ստորագրությունը, ամսաթիվը՝

05.06.2023թ.